

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 Ֆր.
Վեցամսեայ 4 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 Ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. Տօլ.
Վեցամսեայ 1. Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԽԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ

20 ՍԵՒ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՀԱՐԱԹ ՕՐԵՐ

ՊԱՌԱՍՏԻՉ ՕՌԿԱՆԸ

Սինդիկատի մէջ մի անկիւնէն յուսահատ դիմումներ կը լլան Ազգ. Կեդր. վարչութեան, վարչ. ներու և կառավարչներու քմահաճ և հայալնաս ընթացք ուղղել տալու համար, և Կեդր. վարչութիւնը իր Պատրիարքով և Երեսփոխով կարելին ընել կը փորձէ գաւառի Հայուն տանելի կեանք մը ապահովել տալու համար, ադիսին հայ անունը կրող խմբակի մը օւկանը, Ազատամարտ, դաւաճան մտածումը կունենայ իր խմբագրական սիւնակներուն մէջ յայտարարելով թէ Պոլսոյ Ազգ. Երեսփ. Ժողովը իրաւունք չունի գաւառի գործերուն խառնուելու և գաւառի հայութեան ներկայացուցիչը կոչուելու ներկայ պարագաներուն մէջ այս յայտարարութիւնը եթէ թուրք թերթ մը ընէր, ազգովին մեր նողկանքը պիտի յայտնէինք ու խստիւ բողոքէինք անոր դէմ, հոն, այդ յայտարարութեան մէջ տեսնելով մեր ազգային կազմակերպութիւնը սղծելու և Հայութիւնը բաժան բաժան ընելով խեղդելու սադայելական յետին միտք մը: (*)

Հիմակ հարցնենք թէ ի՞նչու համար Ազգ. Երեսփ. Ժողովը իրաւունք չունի եղիւր գաւառի հայութեան ներկայացուցիչը համարուելու:

Ազատամարտ կը պատասխանէ — Որովհետեւ, կրնէ չթուրքիոյ հայութեան մեծագոյն զանգուածը ներկայող այդ վեց նահանգները (Կարին, Վան, Բաղէշ, Տիգրանա, Կերտ, Խարբերդ և Սեբաստիա) միայն վեց երեսփոխան ունին Պոլսի Ազգ. Ժողովին մէջ:

Ազատամարտի այս խօսքը բացարձակ սուտ մըն է. որովհետեւ այդ նահանգները քսանէ աւելի երեսփոխան կուտան Ազգ. Ժողովոյ. միայն Սեբաստիան չորս երեսփոխան կուտայ իր գաւառներով:

Բայց այդ նպատակաւոր սուտը գլորելով հանգել և Ազատամարտ չի կրնար ուրանալ թէ Թուրքիոյ ընդհանուր գաւառները 40 երեսփոխան ունին Ազգ. Ժողովոյ մէջ մինչդեռ Պոլսը ունի 100 երեսփոխան:

Ազատամարտի այս խօսքն ալ ճշմարտութեան չի համագատասխաներ, քանի որ գիտենք թէ այդ 100 թիւին 20 էն աւելին կղերական դասուն երեսփոխաններն են, որոնց մեծագոյն մասը բնիկ գաւառացի է. իսկ միւս 80ի մօտ Պոլսոյ երեսփոխաններուն կարեւորագոյն մէկ մասը կրկին բնիկ գաւառացիներէ բաղկացած է, օրինակ Կէտիկ-փաշա թաղին երեսփոխաններուն 3-4ը գաւառացիներ են:

Այս իրողութիւնէն յտակօրէն կը տեսնուի թէ թէ՛ Պոլսոյ և թէ՛ գաւառներու մէջ կատարուած երեսփոխանական վերջին ընտրութիւններու ատեն պոլսեցիի ու գաւառացիի խտրութիւն բնաւ չէ եղած. մանաւանդ Պոլսոյ թաղերուն մէջ երեսփոխաններու ընդհանուր ընտրութեան ատեն, չորս սակէ երկու տարի առաջ, պէտք է խոստովանիլ թէ, արժանաւորէն աւելի Դաշնակցականը և Հնչակեանը փոխառեցաւ երեսփոխան ընտրելու համար բոլոր նակալ ու ժողովն յանկարծ ազատող պոլսեցիք նորոտաց ազատութեան գինովութեանը մէջ՝ դիւթուած ազատութիւնը մենք բերինք, ևս ըսող հայ կուսակցական հետորներու անուշ խօսքերէն ու թեւադրանքներէն՝ ընդհանրապէս իրենց քուէները միացուցին Հնչակեան և Դաշնակցական քանդակներէն, ու վրայ:

Այդ բացառիկ առիթէն մեծապէս օգտուող Ազատամարտի խմբակը ամէնէն աւելի իր բերանը կարկուտ ապահովուէ այժմ, վասն զի ալ ասկէ անդին չպիտի ըլլայ օր մը ուր այդ կուսակցութիւնը կարող ըլլայ յաջողապէս իր մատուցելու քչելու հայ ժողովուրդի աչքին իրը քանսիտա

երէսփոխանութեան, թաղականութեան հայրն, Մեր այս ըսածը գուշակութիւն մը չէ, այլ ապացուցեալ ճշմարտութիւն մը, որուն նմոյշը տեսնուեցաւ անցեալ շաբթու Տրապիզոնի մէջ, ուր կուսակցականք խիստ զօրաւոր ըլլալ կը թուէին և ուր երանելին Շահրեկեան յենած իր սպայակոյտի թեւերուն ի զուր իր ցուցամտը յոգնեցուց դաշնակցական քանդակները ժողովուրդին ժառանգելով:

Ուրեմն այսօր գաւառը Պոլսոյ դէմ հանել փորձելով ինչ կուզէ Ազատամարտ. Սահմանադրութեան վերաքննութիւն:

Բայց ցարդ ո՞վ հակառակեցաւ այս մտքին Մենք հաւատացած ենք որ Պոլսեցիք ալ հազիւ անընչան բացառութեամբ մը, Սահմանադրութիւնը վերաքննելու կամ բարեփոխելու կողմն են. որովհետեւ 50 տարի առաջ նախատեսել անկարելի եղած ինչ ինչ կէտեր և պարագայից փոփոխութիւններ պէտքը կը զգացնեն մեր Ազգ. Սահմանադրութեան ալ կարգ մը յոգնածներուն բարեփոխութեանը, Սակայն ասոր համար ինչ հարկ կայ գաւառացիին պոլսեցիին դէմ հանելու և այսօրուան Ազգ. Երեսփ. Ժողովի դէմ ապստամբութիւն գրգռելու: Այժմ օրինապահութիւնը կը պահանջէ մինչև նորին գալը հին օրէնքը յարգելու Ազատամարտ այդ կերպով գաւառացիին իրաւունքներուն ինքզինք պաշտպան ներկայացնելով չենք կարծեր որ յաջողի իր անկողնաւ մտքի արտաբերութիւնները քչելու և իր կուսակցութեան թրքահայ իրականութեան մէջ այլևս չունեցան գոյութեան իրաւունքը ճանչցնելու գաւառացիին, որուն աչքերը բացուիլ սկսած են ժամանակէ մը ի վեր:

Մենք հոս խօսքը անգամ ընել անպէտ կը զգանք այն սինսպառնալիքինը որ Ազատամարտ կը թափէ Պոլսեցիին և Ազգ. Երեսփոխանութեան գլխուն, եթէ այս վերջինը եկեղեցիները փակէ, գաւառը չպիտի յարգէ այդպէսի հանրապետութեան ու գաւառան որո

չում մը պիտի քամահրէ ու անցնի վրայէն, կրնէ Ազատամարտ Այսօր ալ գաւառին անունով խօսող այդ խմբակը ինքն ևս գիտէ թէ իր դալայ մանկրները ինչպէս Պոլսի նոյնպէս ալ շատ մը զարգացեալ գաւառներու մէջ չանցնիլ սկսած են արդէն և հետզհետէ պիտի վտարուին որչափ գիտակցութիւնը զարգանայ ներքին գաւառներուն մէջ ալ:

Մարդիկը այս բոլորը կը զգան բայց գիտնալով հանգերձ օրհասական արջի կռիւ կը մղեն, վասնզի իրենց հացի և գոյութեան խնդիրը ծառացած է աչքերնուն առջև, այս պատճառաւ այլևս ամէն իւրաքանչեւութիւն դադրած է անոնց համար Անոնք չեն ուզեր մտածել թէ՛ եթէ Ազգ. Երեսփ. Ժողովը ու Պատրիարքարանը քանդենք, գաւառացի հայուն գանգատները տեղական հարտահարիչներու դէմ ո՞վ պիտի լսելի ընէ բարձրագոյն իշխանութեանց և դարձան ձեռք բերէ, գիտնալով հանգերձ թէ իրենց ընտրել տուած Օսմ. Բաւլըմանի հայ անդամները իրենց յիսունական ոսկի ամսականը ապահովելէ զատ ոչինչ չեն ըներ գաւառացի հայուն համար, և կիլիկեան ոճերէն սկսած մինչև Մշոյ Դոր արհաւիրքը անոնք Օսմ. Բաւլըմանին մէջ լուռ ու ձեռնպահ հանդիսատեսներ են եղած միայն հայ նահատակութեանց հանդէպ:

Բայց Պ. Ազատամարտեաններ, քանդուներուն վերջը ե՞րբ պիտի գայ, Բաւլըմանութեան ատեն խմբական անխորհուրդ շարժումներու հետեւսնքով՝ Հայաստանի մէկ ծայրէն մինչև միւսը՝ քանդել տալէ յետոյ, սա սահմանադրական ուժժիմին տակ ալ մեր ազգային հաստատութիւնները քանդել ջանալուը վերջը ու՞ր պիտի երթայ, Օսմ. Երեսփ. Կերպութիւնը իր գոյութենէն ի վեր գոնէ խրճիթ մը կանգնած, որբիկ մը խնամած և թրքահայուն հետուէն կամ յօտէն իրական բարիք մը հասցուցած ըլլար, Ոչ մէկ բարիք, այլ քանդում, պառակտում, աւեր և ուրիշ... Ահա ձեր գործունէութեան բոլոր արդիւնքը, Յ.Պ.

(*) Տեսնել Ազատամարտի յունիս 11 թիւի խմբագրական յօդուածը:

ԴԻՄՈՒՄ Ի Բ. ԴՈՒՈ

Շարաթ օր տեղի ունեցաւ վարչապետին մօտ որոշեալ գիտութեան և ինչպէս կարգադրած էր իրաւն ժողովը Ս. Պատրիարքին ընկերացան Օսմ. երեսփոխաններէն Չօրապ և Վարդգէս Էֆ. ներք, ինչպէս նաև իրաւն ժողովէն Տաղաւարեան Էֆ.:

Ս. Պատրիարքն և իրեն ընկերացողները Մշտյ արդի վիճակը, ինչպէս նաև հոգւոյն ինչորէն ծագումը՝ առած անհաճոյ զրուցիւնը ներկայացուցին և ոչ միայն Հայ ազգի ներկայացուցիչներ, այլ իբր Սահմանադրական երկրի զաւակներ բացատրեցին թէ՛ կառավարութիւնն եթէ անմիջական դարձան չիտորի այս կայսրութեան, զրուցիւնն աւելի պիտի գէշնայ, որովհետև ասկէ առաջ Մշտյ մէջ սպաննուած երկու Հայէն զատ, կաւաչի (Վան) կողմերն ալ չողային խնդրոյն հետեւանք երկու Հայեր սպաննուած են: Այս կարգի սպաննութիւններ և վէճեր կը վարցուի որ անպակաս ըլլան խաղաղութեան և բարեկարգութեան կարօտ թուրքիոյ մէջ, եթէ կառավարութիւնը զարման մը չիտորի: Առարկողներ կան որ, չողային խնդրէն ծագում կ'առնեն այս վէճն և կուզուի այս խնդիրը խափանել, ինչպէս փորձ մը կ'ըլլայ Չարահանագի մէջ ալ, բայց բացատրուեցաւ վարչապետին թէ՛ ասիկա Հայոց գոյութեան խնդիրն է, հետեւաբար Ս. Պատրիարքն և պատգամաւորութիւնը մասնաւորապէս ծանրացան մէկ քանի գլխաւոր կէտերու վրայ: Առնոց առաջինն է քուրդերու զինեալ շրջելը, մինչ Հայերու քով ո՛ր և զէնք չգտուիր: Ինչէն կուսակալին պարագայանագի համապատասխան ընթացք չընենլը, կառավարութեան կողմէ նախապէս խնդրուած շրջուն զինուորական վաշտերու չկազմուին և կեղեքիչ անձերու անպատիժ մնալուն հետեւանքով տիրող վրդովիչ վիճակը: Վարչապետն բոլոր թէ ինչպէս Հայերը կ'վստիսան Քուրդիքէն, նոյնչ կ'առարկեն նաև Քուրդերը, որուն պատասխանուեցաւ թէ՛ մինչև հիմա արիւնհեղուկեանց առիթ տուողներն ոչ թէ Հայերը, այլ Քուրդերն են, հետեւաբար անոնք վախճուող ո՛ր և է պատճառ չունին: Վարչապետը պատասխանեց թէ Ալպանիոյ մէջ Սահմանադրական թուրքիանցից տուած թէ իր կարգերուն և օրինաւորութեան գէշ կուսող տարերն անպատիժ չեն մնար: Հագագը փաշա աւելցուց թէ ասիկա զատ մը պիտի ըլլայ ամէն անոնց համար որ կ'փորձեն խանգարել երկրին անդորրութիւնն և հանդարտ ժողովուրդը կը յուզեն: Վարչապետը ըստ, Ատանայի խնդիրը այնքան յուզած է բոլոր Օսմանցիներն և ամենուն խըղճին այնքան ազդած է, որ պիտի աշխատուի երկրի ու է մէկ կողմը ժողովուրդին վիճակը խանգարող արարքներու տեղի չտալ, թէև բարեկարգութիւնն ալ մասնաւոր այնքան ցաւալի վիճակէ յետոյ անմիջապէս չի կրնար գործադրուիլ, բայց աստիճանաբար ի գործ պիտի դրուի. նոյնպէս հոգւոյն խնդիրն ալ ըստ ժամանակի և փոխադարձ համաձայնութեան կը կարօտի, իսկ ինչ որ կը վերաբերի առարկայի գէշերու անոնք իրենց լուծումը պիտի գտնեն և ինչպէս Սահմանադրութեան փաշա ալ յոյս ապստամբական վիճակին պատճառաւ Ալպանիա գնաց և խաղաղեցուց, ներքին գործոց նախարար Թալէաթ պէյ ալ ըստ ի մօտոյ Անատոլու պիտի երթայ և թէ՛ անդորրութեան և թէ՛ հոգւոյն հարցին խնդիրները պիտի ուսումնասիրէ:

Հագագը փաշայի կարծիքն այն է որ երկրին տնտեսական անկեղծ վիճակը, և ժողովրդեան անգործութիւնը պատճառ կ'ըլլան այս վիճակին: Չօրապ Էֆ. Պատրիարքաբանին պահանջները ամփոփեց հետեւեալ կէտերուն մէջ. — Նախ և առաջ՝ շրջուն վաշտերու գոյութիւնը, մասնաւոր Մուշ, Սասուն և Վան, որք իբրեւ մնայուն ոյժ պիտի հասկցնեն խուժանին թէ կարելի չէ բարեկարգութիւնը խանգարել իրենց ուզած եղանակով: Չօրապ Էֆ. պահանջեց նաև որ կառավարութիւնը պաշտօնական յայտարարութեամբ մը, ու նոյն իսկ կայս. ֆէրմանով հազորդէ թէ չարագործներ, ոճրագործներ ապկէ վերջ չեն կրնար ներուիլ, որովհետև Սահմանադրութեան առթիւ ներուած չարագործներն են որ կ'կողոպտեն հիմա և յայտ ունին որ դարձեալ կրնան ներման արժանանալ: Պէտք է հասկցնել թէ ըստ եթէ հիմա պատժի արժանի արարք մը ունենան, իրենց նախկին ոճիրին հետեւանքն ալ պիտի կրնն: Ասկէ զատ, ըստ. ժողովրդին մէկ մասին զէնքը առնելով միւս մասին քով զէնքը թողուլ ներքի չէ, և պէտք զգացուց Քուրդերուն զէնքն ալ առնելու, որովհետև երբ Հայերը զէնք տեսնեն Քուրդերուն քով, բնականաբար սարսափահար պիտի մնան: Ս. Պատրիարքն և պատգամաւորութիւնը պիտեցին որ անհրաժեշտ է մասնաւոր վերջին օրերս ոճիրներ գործողները երևան հանել, որովհետև երբ ասոնք չ'ենտապաշտուին, կարելի չէ որ ժողովուրդը համոզուի թէ կառավարութիւնն սկսած է իր ոյժն ի գործ դնել, երբ յայտնի է մանաւանդ որ փոքր ջանքով մը կրնան դուրս ելլել ասոնքը:

Ասկէ ետք, խնդրուեցաւ թէ քանի որ Բաղէշի կուսակալը կ'գժուարանայ պէտք եղածը ի գործ դնելու, այս մասին ալ միջոց մը գործադրուի: Վարչապետը խոստացաւ ասոնք ներկայացնել նախարարաց խորհրդոյ և երբեք գործոց նախարարին հետ խորհակցութեամբ կարգադրել առ այժմ որքան որ կարելի է: Ս. Պատրիարքը ապացուցանելու համար որ թէ՛ հոգեւոր պետն և թէ ժողովուրդը յուսահատ վիճակի մատնուած են, հաղորդեց որ Մշտյ առաջնորդը գրեթէ ձեռք ընկած կ'ըլլայ, իսկ միւս կողմէ Չարահանագէն հեռագիրն եկած է թէ ժողովուրդը լսելով որ զրաւեալ հոգերը պիտի մնան պէյերու, ինչ որ որոշած է պետական խորհուրդը, 15,000 Հայեր ուրիշ ճար չեն գտած եթէ ոչ գաղթել այլ ևս իրենց բնավայրերէն: Ս. Պատրիարքն այս հեռագիրն ալ ներկայացուց երէկ վարչապետին, որ յուսադրեց թէ մէկ քանի օրէն կառավարութիւնը գործադրութիւններ պիտի ընէ:

Տեսակցութեան միջոցին վարչապետին մօտ եկաւ նաև երմտակոն նախարար ձափառ պէյ որ Ս. Պատրիարքին պահանջներուն գործադրութեան մասին իշխանութեան կողմէ կտրուոր մշտնջերուն գործադրութիւնը խոստացաւ: Պատրիարքաբանի պատգամաւորութեան մեկնած պահուն անգլիական դեսպանն եկաւ վարչապետին մօտ: Սըր Ճ. Լոուիէր իր հիւպատոսին միջոցաւ տեղեկացած է թէ Մշտյ մէջ վերջին տեսներս ինչ վիճակ ըսկած է տիրել: Մուշէն ժողովոյ անգլիական կ'հեռագրեն Պատրիարքաբանին թէ առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսն անհատելով տիրող վիճակէն, չի միջամտեր գործերուն, որովհետև կը տեսնէ թէ իր գլխունին անպարզին կը մնան բոլորովին: Պատրիարքա-

բանը, որ անցեալ Չորեքշաբթի արդէն հեռագիր մը ուղղած էր իրեն, նոր հեռագրով մ'ալ պիտի յանձնարարէ որ չարունակէ իր պաշտօն և թէ կառավարութիւնն ի մօտոյ գոհացում պիտի տայ Պատրիարքաբանի խնդիրներուն:

«Բիւզանդիոն»

ՏԵՂԱԿԱՆ

ԲԱՅ ՆԱԽԱԿ

Առ Պատ. Թաղ. Խորհուրդ. Երէկ յուղարկուորութեան ատեն երբ որ Պր. Կարապետ Քուրտեանի հետ կը վիճարանէի խնդրոյ մը առթիւ, ինչորէն անգամները միջամտելով, Պ. Կ. Քուրտեանը այս նեղ դրութիւնէն ազատելու համար, անոր կողմէն կից և իմ ելաք և ինձ յայտարարեցի թէ «անցեալ կիրակի խորհրդարան դիմում ընող ժողովուրդը, ամենքն ալ գաղթական դուրսեցնեն էյն, անոնք ով կըլլան կոր, կուզենք անոնց ամենուն ալ լեզունքն երկու ոտակաւով կտրել տանք, անոնք մինչև անգամ քուէ տալու իրաւունք չ'ունեն, ինչպէս պիտի խառնուին Թաղ. Խորհրդոյ գործերուն, ինչպէս որ եղաւ Ռուսոսկի մէջ...»

Ռեբան կը հարցունեմ Պատ. Թաղ. Խորհրդոյը թէ, դուք արդեօք որոշուեցաւ թէ որ ընդունեցաք և ինչու ձեզ համար քուէ տուող նորեկ գաղթականներն իսկ ընդունեցիք Ձեր ընտրութեանը ժամանակ:

Եթէ չ'էք ընդունել: Եր աղգ. Սահմանադրութիւնը (ինչպէս որ դուք կը պնդէք դուրսը մշայն), և եթէ իրաւունք չ'էք տար Գաղթական ժողովրդին ազգային գործերու խառնուելու, ուրեմն նախ և առաջ դուք անցէք Տ. Արմ. Գալֆան և Տ. Յ. Սարուխանեանը. ընտրելու իրաւունք չ'ունեցող Գաղթականներ ընտրուելու ալ բնաւ իրաւունք պէտք չէ ունենան:

Երկրորդ երբոր գաղթական ազգային նորու քուէ տալը ապօրինի էր, ուրեմն Ձեր ընտրութիւնն ալ ապօրինի է:

Սեծապատիւներ, Գործ ընտրուեցաք աւելի Գաղթական ազգայիններու ստուար քուէովը և այն պայմանաւ որ երբոր Ար. Գալֆան չ'անէր առաջին առթիւ լուսարար պրն. Ռուբէն Համարձուեանը և քարտուղար Սիմոնեանը դուրս պիտի ձգէր իրենց պաշտօնէն, ժողովուրդը գոհացելու համար միայն ժողովուրդը խաբելով քուէ կորգելու համար էր այդ խոստումը:

17 Յունիս 1910

Վառնա

Թ. ԷՆԿԻՊԱՐԵԱՆ

ԲՈՂՈՒՄ ՄԸ (*)

Առ Մեծապատիւ Տիար Ատենապետ Թաղ. Խորհրդոյ Վառնայի Մեծապատիւ Տիար Ձեր գրութեամբ ինձ կը վերագրէիք մը քանի անպատշաճ և անկանոն ըն-

(*) ԾԱՆՈԹ. ԽՍԲ. — Մեր բացակայութեան չափէ աւելի յուզուած է և դեռ կը յուզուի Լուսարարի և երաժշտապետ խնդիր մը, որուն համար ԱՊԻ մօտ ստորագրութեամբ հանրապետութիւն մը Թաղ. Խորհուրդին ներկայացուելով, Լուսարար Պ. Ռուբէնին պաշտօնականութիւնը և երաժշտապետին իր պաշտօնին մէջ վերահաստատուիլը պահանջուած է: Թաղ. Խորհուրդը տրամադրի չէ երեցած այս ժողովրդական պահանջին գոհացում տալու և

թացքներ, իբրեւ թէ իմ պաշտօնիս և պարտականութեանս մէջ թերացած և Ձեր հրահանգին հակառակ գտնուած եմ:

Ա. — Ես երգեցիկ խումբ մը կազմեցի իբրեւ Կարապետ, տաւնց Ձեր հրահանգին և տաւնց Ձեր առաջուրնէ որոշեալ կանոնագրին, մասնաւոր թաղ. Խորհրդոյ անգամներէն Տ. Տ. Արա. համ Գալֆա Կարապետեան և Կարապետ Աճէմեան այս երգեցիկ խումբին կազմուելուն շատ փափաքողներէն չէին. մինակ ես իմ կարողութեանս չափով աշխատելով յարմար եղող և փափաք ունեցող տարրերէ կազմեցի այս երգ. խումբը, որով անոր պատասխանատուութիւնը մի միայն իմ վրաս էր. ուրեմն այսօր այս երգեցիկ խումբը ցրուած է կամ ոմանք հեռացուցած եմ ես իմ ձեռնհասութեամբս ըրած եմ, այս պատճառաւ Պատ. Թաղ. Խորհուրդը չունի իրաւունք զիս պաշտօնէս հրաժարեցնելու իբր այս փաստ առաջ քննելով, քանի որ առաջուրնէ ալ իւր կարգադրութեամբ չէր կազմուած խումբը:

Բ. — Ես եկեղեցւոյ մէջ անվայել ընթացքի մէջ կը գտնուիմ եղեր. այս մասին մինչև այսօր ինձ ու է գլխաւորութիւն և կամ յանդիմանութիւն չէ եղած, որովհետև պակասութեան մէջ չեմ գտնուած, եթէ եղած է և չեմ անսացել փաստեցէք: ապա թէ ոչ, այս պատճառաբանութիւնը անիմաստ է չունի ու է թէ ազգեցութիւնն զիս պաշտօնէս հրաժարեցնելու չափ զօրաւոր: Ես եկեղեցւոյ մէջ կրօնականներու և իմ պաշտօնակիցիս այնպիսի անվայել և եկեղեցւոյ օրնոց հակառակ վարմունքը և խոսուածքները տեսած ու լսած եմ որ եթէ հրաժարեցնել հարկ է, նախ և առաջ Պատ. Թաղ. Խորհուրդը այնպիսիները հեռացնէ և իսպառ վրանէ եկեղեցիէն:

Ուրեմն այս պատճառաբանութիւնները անիրաւի և ինձ վերագրուած անվայել և պաշտօնիս մէջ կանոնի հակառակ ու է գործ և վարմունք չունենալով կը խնդրեմ:

Ա. — Պատ. Ժողովուրդ, դիւանէն որ ինձ պէտք եղած և ուրիշ ամիս պաշտօնավարութեանս բարի վարուց վկայականը տրուի:

Բ. — Եկեղեցւոյ Լուսարար Պր. Ռուբէն Համարձուեանին, եկեղեցւոյ սեղանէն Ս. Պատարագի արարողութեանց ժամանակ և իմ պաշտօնիս կ'իրարիմանը ատեն, ինձ հայտնելով, ժողովրդին մէջ գաղթականութիւն պատճառելով, զիս անարգած ըլլալուն համար, իբրեւ Աղգ. անհատ և եկեղեցւոյ պաշտօնեայ կը խնդրեմ Պատ. Թաղ. Խորհուրդէն և միշտ պիտի պըն:

Ինչպէս այն հանրագործութիւնը նոյնպէս ալ երաժշտապետին այս բողոքը՝ զոր անփոփոխ կը հրատարակենք գրեթէ ցարդ անհետեւանք մնացած ըլլալով խնդրուած է մեզմէ հրատարակել իրաւունքի մէջ ի գրառութիւն ընդհանուր ժողովրդին:

Ըստ ինքեան անկարեւոր այս խնդրոյն մէջ խմբագրութիւնս իր բացարձակ չեզոքութիւնը պահելով հանդերձ, հարկ կը դատեմ սաչափ մը դիմել աղթէ Թաղ. Խորհուրդ մը ըստ ամենայնի ձեռնհաս է լուսարարի ժամկույժի երաժշտի խնդիրներ ինքնադուրս կարգադրելու օրինաւորութեան սահմաններէն մէջ, բայց և այնպէս պարտաւոր եալ է նաև հանրային կարծիքը նկատի առնել և ժողովուրդին մէկ ստուար մասը չի գժտեցնել, քանի որ ինչ հանուրին աշակցութեանը կը կարօտ, եկեղեցւոյ պայծառութիւնը և ազգավարանի ազգիւնաւորութիւնը:

գեմ որ հեռացնեն և հրաժարեցնեն Պ. Թուրքին Համբարձումեանը եկեղեցւոյ Լուսարարութիւնէն: Եթէ այս խնդրքս չի կատարուի պիտի զիմեմ ուր որ անկէ և պիտի ընեմ ինչ որ պէտք է: Առ այս ուրեմն կը խնդրուի Պատ. Թաղ. Խորհրդէր որ փութով կարգադրէ սոյն խնդրքը, որովհետեւ նեղ և դժուար դրութեան մէջ գտնուելով պիտի մեկնեմ որ առաջ:

Յարգանք
Երամիքս Ուսուցիչ
ՏԻՓՐԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԱՆ

19 Մայիս 1910

Վառնա
Թ. Գ. — Տէր Սարգիս Քաջանայ Դարպեանը իմ վկանեալ առաջ իրեն ըրած գանգատս խելով խելով կիրական օր ժողովուրդի առջև սուտ վկայութիւն տուաւ: Այս խնդրին համար ես վկանը ունիմ, կը խնդրեմ Տէր Ս. Դարպեանէ ինքն ալ օր առաջ իւր անաչառ և արդարադատ դատաւորները կարգելով իմայնէ ինձ: Ողջ

ՊԱՐԱԿԱՆԱՅԻՐ

Ի վերջոյ գրուած նամակէ մը կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնը:

Ատրպատականի հայ թեմերու սագործները կարգադրելու համար, Առաջնորդ Կարապետ եպիսկոպոս պառլամենտի ելած է:

1) Պատմական Դերիկ վանքն իր հողերով տիրապետել են քիւրդերը և սեփականացրել: Յուսահատված կառավարութեան խոստումներէն ու նրա գործ դրած անգործ միջոցներէն, Կարապետ եպիսկոպոս մեծ յոյսեր ունի՝ ձեռք բերելու կալուածները և դուրս քշել քիւրդերին՝ բանակցելով անձամբ աղաների հետ:

2) Արաքսի ափում ս. Ստեփանոս նախավկայ վանքի և նրա Դարաշամ հայաբնակ գիւղի սեփական վարելահողերէն գրաւել է ոմն Ռուսոպատակ Մամադով և վանքի սեփական հողերով առու է քանդ արել և ջուր է տանում Արաքսի իր վարելահողերի համար՝ վանքապատկան հողերը համարելով իր սեփականութիւն:

Մամադովի յափշտակութեան մասին բողոքել էր իր ժամանակին վանքի վանահայրը, և Կարապետ եպիսկոպոսի միջամտութեամբ գործն հասաւ թաւրիդի ռուսաց հիւպատոսին Պէտք զգացվելին զօլուստներ իւրաքանչիւրի սեփականութեան սահմանները ձգելու համար այդ պատճառով, էջմիածնից ուղարկվելը կալուածախնդրութեամբ: Այս օրերս ռուսաց հիւպատոսը մի քանի յանձնարարումներ է ուղարկելու նախավկայ տեղն ու տեղը սահմաններն ստուգելու համար՝ այդտեղ և՛ կը գտնուի թեմական օրապատկերը Անկախած ենք, որ խլիւսած հողերը յետ կը ստացվեն և վանքի հողերէն առու անցկացնելը կարգելի միանգամ ընդմիջաւ:

3) Ստամբուլում գիւղատեղիները նոր նոր պահանջներ են աւելացնում հայ գիւղացիներին վրա: Հարկատու է զօրեղ միջամտութիւն: Բացի դրանից կրթական գործը վերջն աստիճանի անմիջական կացութեան մէջ է և կարիք ունի գիտակից հոգածութեան:

4) Երկու տարուց աւելի է, ինչ Դարապետը չարքաւ հայ գիւղացու քաջածը ոչ ոք չէ քաշել: այժմ էլ դուրս է եկել Դարապետ խոսքը և Բաշի խոսքի թողած պակասը նա է լրացնում: Մուսթաֆա Սալիմեան ձեռք է առել պոնտ միջոց, որ ձեռքաւակնեն նրա և

ուղարկեն թաւրիդ, թեմականի ներկայութիւնը դրականապէս անհրաժեշտութիւն է Դարապետում, գուցէ միաժամանակ ազգային կալուածների դրութիւնը բարելաւելու մի հնար ստեղծվեր:

Ասում ենք, որ գաւառներում անհամար գործեր սպասում են խնամոտ հոգատարութեան: Գործեր անհատական, ազգային, կալուածական եկեղեցական, կրթական: Վերջինս անպատիվ և տխուր մի պատկեր է ներկայացնում ընդհանրապէս, շնորհիւ այն հանգամանքին, որ վերջին 10—15 տարիների ընթացքում կրթական հաստատութիւնները ակամայ անցան ապիկար խնամակալների և պատահական ուսուցիչների ձեռք, որոնք բնաւ չեն համապատասխանում իրանց բարձրագոյն կոչման:

Գեներալ-նահանգապետը հեռագրական հրամաններ տուեց գաւառական դատաւորներին, որ արժանաւայել յարգանքով ընդունեն հայոց առաջնորդին մուտքն այդ տեղերում և աջակցեն նրա ձեռնարկած գործերին:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՐՁԱՅԱՆԻ

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մի կօնգակով յանուն Թիֆլիսի թեմական առաջնորդի, խստիւ դատաւարեց Սուխուმი հայոց եկեղեցում թաւրաւկան ներկայացուցչին տալու գէպքը և արգելելով եկեղեցիներում այդ և այլ անասկ ժողովների կազմումը: Հրաւիրում է առաջնորդին, յաջորդներին, գործակալներին, աւագ-քահանաներին և ծխական հոգաբարձութիւններին ուշադրութիւնը նաեւ եկեղեցիներում տեղի ունեցող այլ տգեղ երեւոյթների վրա, ինչպէս է աղմուկ հանելը, խոսելը, հաւատացեալների կրօնական զգացմունքները վիրաւորելը: Կծուակը պատուիրում է, որ տօն օրերին, երբ հիկեղեցիներում մեծ բազմութիւն է լինում, ծխական հոգաբարձութիւններն ընտրեն ժողովուրդի միջից յատուկ կարգապահներ:

Ամենայն հայոց Կաթողիկոսը հրատարակել է տուել ժամանակաւոր կանոններ թեմական պատգամաւորական ժողովների և նրանց գործունեութեան չրջանի մասին: Թեմական ժողովի պատգամաւորները ընտրվում են 4 տարով և գումարվում են ժողովի տարին մի անգամ: Նրանց իրաւունքն է ընտրել: 1) Թեմական առաջնորդ, եթէ թեմի աքոսը բափուր է, 2) Թեմական զպրոցի հոգաբարձուներ, 3) Թեմական խորհրդի անդամներ: 4) Կազմել և հաստատել թեմական զպրոցի նախահայրը և հայրը, 5) հսկել թեմական վանական կալուածների վրա: Թեմական ժողովը առաջնորդի պաշտօնի համար ընտրում է 4 կանդիդատ և ներկայացնում Կաթողիկոսին, որ ջնջում է ցանկից երկուսին և վերադարձնելով երկուսուն ցանկը ժողովին՝ առաջարկում է ընտրել երկուսից մէկին առաջնորդ:

Ուրեմն այդ նոր հրահանգով հիմն է դրվում թեմի եկեղեցական-կրթական-կալուածական գործերը ժողովրդի օգնութեամբ կառավարելու սկզբունքին:

ՎԱՐԱՊԱՅ ԹԻՍՆԱՄԱՆԱԿԸ

Վաղը (20 Յունիս) Վարապայ Ժառանգաւորաց վարժարանին յիշնամեալ յորեւեանը կր կատարուի Այդ Ժառանգաւորացին հիմ

նադիրն եղած է ինքն Խորիմեան Հայրիկ: ասկէ յիսուն տարի առաջ Հայաստանի խոր մէկ անկիւնը վայրենի և բոլորեցեղեքով չըջապատուած վանք ժառանգաւորաց վարժարան և տպարան հաստատելու մեծագործութիւնը անխնայ և ազգանուէր Խորիմեանի մը կրնար յատուկ ըլլալ: Այժմ Հիմնադիրին ոսկորները գերեզմանի խորէն թող հրճուին ու ցնծան իր սկսած գործին այսօր, յիսուն տարիներ յետոյ բեղմնաւոր կերպով շարունակուելը տեսնելով:

Վարապայ վանայ առաջնորդարանէն անկախ և սեղանի Պատրիարքարանէն կարգուած հոգաբարձութեան մը մատակարարութեանը յանձնուած ըլլալուն շնորհիւ գերծ մնացած է Դաշնակցական խիշտաններու և «Կոմսներու» ու իրեց հետեւորդներու այն շահատակութիւններէն ու կողոպտումներէն որոնց մատնուեցան վերջին տարիներու մէջ Վապուրականի միւս պատմական վանքերը և ազգային հաստատութիւնները:

Աւերող Հայութիւնը և մասնաւորապէս Վապուրականից հընդհանրին պէտք է մասնակցին այն տօնին որ վաղը կը տօնուի Վապայ մենաստանին մէջ, ոչ լուսնելով հայ աշխարհի վերածնութեան հիմնադրի Յիսնամեակը: Ուրախ ենք հաստատելու որ Վարապայ մեղաւորան հոլաբարձութիւնը վանքին նիւթականն ալ նախանձելի գրութեան մը հասցուցած է այսօրվանքին հոգերէն 15000 գրիւ հացահատիկ կը ստացուի, 1200 իշափ ոչխար, 150 ի չափ կովեր և եկեղեցի:

Տեղւոյս Վապուրականից խնդրակցական հեռագիր մը ուղղեցին Վարապայ հոգաբարձութեան Յուսալի է որ նուէր մըն ալ զԸԿԵՆ ի մօտոյ:

ԱՅԳԱՅԻՆ

Գաւառական, կալուածական և այլ կարգ մը ստիպողական խնդիրներու լուծումը փութացնելու և մասնաւոր ընդհանուր հայութեան ապահովութեան տեսակէտով՝ Գիւրաթիւրու սպառնական ընթացքին վերջ մը տալու համար զիմումներ ընելու անհրաժեշտութեանը առջև, ուրախ ենք իմանալ որ, Ս. Պատրիարքը յետաձգած է մէկ քանի մեքանայ գաւառներ իր ընկիւք ճաշապարտութիւնը: Բայց կը լսենք թէ երեք տարի և ագներ վարդապետ ձեռնադրելու համար Ն. Սրբազանութիւնը մօտեւա Արմաշ պիտի երթայ: Ապահովապէս այս երթիկը գրեթէ 40 օր պիտի տեւէ, և այդ ահագին կորուստ մըն է գաւառի տառապող հայութեան համար, որ անխաղիչ կը սպասէ Պատրիարքաւանէն յուսադրելու լուրերու իր անտանելի կացութեան դարմանումին համար:

Ազգ. երեսփ. ժողովոյ նախընթաց նիստին Ս. Պատրիարքը կառավարութեան ընթացքի մասին բացորոշապէս

զգուանքի արտայայտութեամբ մը ըսած էր «ԵՍ ԻՆՔՍ ԴԻԳՈՂ ԵՄ»: Անչէ յետոյ վարչապետ Հագգը փաշային վերջին դիմումն ալ գոհացուցիչ արդիւնք մը չը տուաւ Պատրիարքին, այլ ընդհակառակը «Գիւրաթիւր ալ Հայրէն կը վախճան» չինուաւ և ծիծաղելի պատրուակը զոր մէջ բերաւ Հագգը փաշան: Բաւական եղաւ ապացուցանելու թէ կառավարութիւնը Գիւրաթիւրը զինաթափ ընելու կամ Հայրէրուն ալ ինքնապաշտպանութիւն թողլալը բնաւ արամադիր չէ, այլ փաշան սին ու չիլով խոստումներ ըրաւ որոնք հազար անգամ կրկնուած բայց երբեք չեն իրագործուած:

Այս յուսահատական վիճակին պատասխանատուութիւնէն ազատելու համար, կերեւայ թէ, Ս. Պատրիարքը ինքզինք կ. Պոլսէն դուրս նետել կուզէ: Պատրիարքարանի և կրթական նախարարութեան միջև զպրոցական խնդիրը տակաւին կարգադրուած չըլլալով, Հայոց համար որոշուած կրթական նպաստի բաժինը ցարգ չի յանձնուիր Ազգ. Պատրիարքարան:

Կրթական նախարարութիւնը Պատրիարքարանէն ուղած էր վարժարաններուն, աշակերտներուն, ուսուցիչներուն վիճակագրութիւնները և ուսուցչական վկայականները: Պոլսոյ վարժարաններուն տրուեցաւ, իսկ գաւառներուն ալ հետգնեալ կը տրուին:

Ատանայի նախորդ առաջնորդ Տէր Մուշեղ եպ. Եւրպա կուղևորի իր առողջութիւնը վախճանելու համար, Մարտէլլի հայ գաղութը սրտազին ընդունելութիւն մը ընծայած է անոր: Տ. Մուշեղ եպ. աչնան կրկին Փաշիլէ պիտի վերադառնայ, ուր պիտի սկսի տեղւոյն Ազգ. վարժարաններու նոր ստանձնած անհաշկան պաշտօնը:

Հայ-Հոռմէականաց նորընտիր պատրիարք Թէրզեան սրբազանի կաթողիկոսական օրհնութեան արարողութիւնը կատարուեցաւ անցեալ կիրակի վայելուչ հանդիսաւորութեամբ և ի ներկայութեան գիււտագիտական մարմնոյն:

Թէրզեան սրբազան մեր կաթողիկոսազայններուն համար փետուռած մրակ պատրիարքացուն էր, որ կաշուած է Հասունի և Ագաթանի աւերածները շինելու, հայ հաստատմանը մէջ եղբայրակցութեան զգացումը զօրացնելով և Հայոց Պատրիարքին զօրավիգ հանդիսանալով Բ. Դրան առջև յարաւերական խնդրոց մէջ, Եւ արդէն անցեալ շաբթուա նախարարներուն առած իր առաջին այցելութեամբ ապացոյցը տուաւ թէ ինք հայ ժողովուրդին ցաւերը մեղմացնելու նպատակաւ ստանձնած է Պատրիարքութիւնը և ոչ թէ փառասիրութեան համար:

Ժամանակի արտօնատէր Քասիմ ևս Կէտիք փաշայի մէջ յարձակում կըրած է հայ սրբիկայէ մը, որ գաւառային հարուած մը Քասիմի գլխուն դարձնել վերջ անկէ կը ձեռքաւարտի թէեւ բայց օձիքը ազատելով կը փախչի և կանխարգելում:

Երուսաղէմի մէջ Տրդատ և Գրիգորիս եպիսկոպոսներու նախաձեռնութեամբ Մասնաձիւղ մը կը հաստատուի Հ. Բ. Ը. Միութեան:

Չոր Բարձուանի մէջ նոյն Միութեան հաստատելիք որբանոցին համար այլեւայլ անձնաւորութիւններ 5 տարուան համար 35 որբեր որդեգրած են տարեկան 7 անգամ ոսկի վճարելու պայմանաւ: Այդ 35 որբերէն 10ը Պօղոս Նուպար փաշա և Տիկիլը, 3ը Բարթոլ փաշա որդեգրած են:

Հ Ա Վ Ա Տ Ի Ս Ա Թ

ԹԻԻՐԻՔԻԱ

Մէծ խիստ Մէծ պոստանքն միւտ-
տէթի սէնէվիսի իքման օլմուշ
օլմալէն սալը կիւնիւ գաբանտը:
Ահալը տախիլիյէ վէ խարիճի-
յէյէ տալիւ Սատրազամ Հագգը
բաշա օ՝ միւնասիպէթլէ ուզուն
պիր նաթգ իրատ իտուպ, մէմա-
լիքի օսմանիյէնին ասայիշի իպ-
գա օլանտըղընը պէյանլէ, Կիրիտ
մէսէլէսինին շու պիր սէնէ գար-
ֆընտա նէ րէնկէր քէսպ իթտի-
կինի թատատլէ թիւրքիանըն հա-
մի տէվլէթլէրէ խիթապէն միւ-
րաճաթլարընը վէ օնլարըն հա-
րէքեթլը տօթանէսինի արզ ու
պէյան էյլէտի:

Կիրիտին թիւրքիայա գարշը
նիւմայիշլընը վէ էլլորբանըն
նուանիստանա հիւսնի խէվէտ-
նուհը զիքը իթմէթլէ պէրապէր,
պիր սէնէտէն պէրու տէվլէթլէ-
րին թալշ ու հարէքէթի թէպ-
տիլ օլտըղընը վէ օնլար թիւր-
քանըն հուգուգընըն մահաֆաղա-
սընա տալիւ շիմտի թէտպիրլէր
էլէ ալտըղլարընը վէ էլլէվլ օս-
մանըն հուգուգընըն հիշ պիր թէհ-
լիքէ գալմատըղընը վէ պու մու-
վաֆագիյէթ Գանուըն էսասի սա-
յէսինտէ էլտէ իտիլտիկինի պէյան
էյլէտի:

Տէօրտ համի տէվլէթլէրին սօն
նօթասընըն մաալընը Սատրազամ
իյգահլէ, Աստրիա վէ Ալմանիա
տէվլէթլէրինին տախի թիւրքի-
անըն լէհինէ միւտախէլէ իտէ-
հէքէրինտէն, զայրը թիւրքիատա
էֆքեթըն ումուսինին թէսքին օ-
լունմասընը թալսիյէ էյլէտի:

Հուգը բաշա ահալը տախի-
լիյէտէն տախի պահա իտէրէք,
Ալպանիա վէ Ենմէն էյալէթլէրի
մէմուսինիյէթպախշ հալտէ պու-
լընտըղլարընը վէ սրալարտա իս-
լահաթըն իծրասընա պաշլանըլ-
տըղընը պէյան էյլէտի:

Սքիւպտէն Պէլլիւտա պիւ-
տիրիլիկինէ պինաէն, սօն կիւն-
լէրտէ Սթանպուլտան մէքքիւր
վիլայէթլէ վէրիլէն Եննի էմիր-
լէր իւլրէ՝ զայրը խրիսթիան է-
հալինին սիւհալարընը թօրլամագ
պէհանէսի իլէ թէհալիւզաթ մէնն
օլունմուշ, վէ օնտան պէրու տէր-
տէթ օլունան Սըրպլարը թէգե-
իք իթմէթլէր իմիշ:

Կէչէն սէնէ Ատանա գըրկընը
էսնասընտա Այնթապտէ պիր
թիւրք տիկէր պիր թիւրքին պա-
շընը քէտուպ էրմէնի մահէլէսինէ
աթմընը Էրզրում սէպէպի-
յէթ վէրմէք շէյթանի մագսէտի
իլէ մագաթ Այնթապ գալմա-
գամը Ալի Բէմալ պէյ պաղը էֆք-
եթըն միւնէվլէրէ սահիպի զաթ
լար իլէ իշին հագըգաթընը ան-
լալուպ, ճանիլէրի մէյտանա չը-
գարմը վէ անլէրի առալէթ րէն-
քէսինէ թէսլիմ իթմիշ օլմալէ

օնլարտան պիրի իտամա մահէլիւ
օլունմուշ Էրզրում:
Պու ճանի թիւրք մայիս 2 տէ
շէհրին մէյտանընտա իպրէթիա-
լէմ իշին ասըլմըն տըր:

Ս. Պատրիարքըն Ոստրազամ
Հագգը բաշա սօն իշթիքեասը
իւզէրինէ՝ Պիթիւս վալիսինէ թա-
լիմաթ վէրիլուպ ուլկունսըղըն-
լարա սէպէպ օլանլարըն ինզիպաթ
ալթընա ալընմալարըն էմր օլուն-
մուշ տըր: Պու Եննի էմրէ ճէ-
վապէն Պիթիւս վալիսին տէվրի
համիտիյէտէ օլտըղը կիպի՝ պիւ-
թիւն վիլայէթտէ ասայիշ պիրքէ
մալ տըր: տէյիւ Սատրազամ թէ-
լէկրաֆ վէրմիշ տիր:

Րուսլարա գարշը Սթանպու-
տա, Սէլանիկտէ վէ տիկէր պաղը
շէհրիլէրտէ պօյքօտ էլան տէվլա
իթմէքտէ տիր: Տէվլէթլէր թէք-
րար Պապը Ալիյէ պիր նօթա վէ-
րուպ, պօյքօտա նիհայէթ վէրիլ-
մէսինի թալէպ իտէհէքէր իմիշ:

Կիրիտ մէծ խիստ մէպոսանը
տէվլէթլէրին իտատասը մուհիպ
իսլամ մէպոսլարը վէ մէմուր-
լարըն Ենմիսիյէ գապուլ իթմէք
խուսուսընտա գարարը գաթի
վէրմէք իշին պու կիւնլէրտէ
թէհէմմիւ իտէհէք տիր: Տէվ-
լէթլէրին սօն նօթասըն Եննանիս-
տանտա հիտտէթգվէ հէյէճան
հուսուլա կէթիւրմիշ տիր:

Մակէթնիստաքի րուս վէ
պուլկար մէքթէպլէրին վէ քի-
լիսէլէրին մէսէլէսինի հալլ իտէն
Եննի գանուընամէի րուսլար քէն-
տի մէնֆաթլարընա միւնասըպ
կէօրմէտիքլէրինտէն, էվլէլ Մէհ-
լիսի Այանա վէ շիմտի Սուլթանա
միւրահաթլէ՝ մէքքիւր գանու-
նըն թատտիք վէ իծրա օլունմա-
մասընը իտատա իթմիշլէր տիր:
Պու մէսէլէ հագգընտա րուս Բա-
թրիքի Ատլիյէ նաղըրընա, Սա-
տրազամ վէ մագսէյէ պիր նօ-
թա վէրուպ շէտիտէն բօթէպթ
իտէրէք, իսթիֆասընը վէրմէք
թէհտիտինտէ պուլունտը վէ Պուլ-
թանըն հուգուընա գապուլ օլուն-
մասընը իսթիւրհամ իթտի իտէտէ,
Սուլթան՝ օլ մէսէլէ հագգընտա
Բաթրիքի հուգընա գապուլ ի-
տէմէյէհէլինի վէ Բարլմանըն
գարարընը պօզմալաճաղընը
պիլտիրտի:

Թալթտան էնտիրիլմիշ օլուն
Մարք էմիրի Ապտիւլ-Ազիզ Պէ-
րուլթա կէլմիշ տիր:

Տուրացցօտա (Ալպանիա) պիր
Աստրիալը Եպիսկոպոս Արնալուտ
ասըլարա թէշլիք վէ սիւհաթլէվ-
զի իթմէք թէհմէթի իլէ թիւրք
ասքէրլէրտէն թուլթուլմուշ վէ
տէօկիւլմուշ օլտըղը վէ խանէ-
սինտէ միւզիւր էվրագ վէ սիւհա-
լար՝ պուլունտըղընը թիւրք
կաղէթալարըն Եաղիյօր:

ՏԱԽԻԼԵՒ

Սեֆիաթա թէհէմմիւ օլունա
ճագ օլան Սլաու ումուսի գօնկրէսինէ

Իշթիւրաք իտէհէք վէ խարիճտէն
կէլէհէք օլան Սլաու աղալարընըն
սաքին օլմալարըն իշին՝ Սօֆիա
մէթէպէրանը խանէլէրինի հա-
ղըրլամընտա տըր:

Չար հագրէթլէրի Բարիս-
տէն ալտէթլէրինտէն սօնրա Պուլ-
կարիտա ասքէր մէվլըլարընտա
պէօյիւկ թէպէտտիւլաթ իծրա ի-
տիլէհէկի շայի օլմուշ տըր:

Սօֆիաթա օլանագ Սլաու գօն-
կրէսինէ Սօսիալիսթլէր քէք գար-
շը պուլունիյօրլար: Օնլար պու
գօնկրէտէ րուս մէնֆաթլը կէօ-
րիյօրլար՝ Սլաու միլլէթլէրի րուս
լաշաղըմագ մագսէտի հըսս իտի-
յօրլար:

Պուլկար միւնիսթէրլէրտէն
Մ. Սալլապաշէվ վէ Բաբրիքով
իսթիգրաղ իշին էվրօքայա ա-
ղիմէթ իթմիշ օլմալէ՝ թիւրքիա
վէ Պուլկարիա պէյնիտէ թիւր-
քէթ ահտնամէսինին թանգիլմի
միւզէքէրաթը թէհէլիւր օլուն-
մուշ տըր:

Իշպու ալըն 23ինտէ րուսի-
ատան ծարիրպօտ թըրէնի իլէ
150քիշի միսաֆիր Սօֆիայա Են-
թիշէհէք տիրլէր:

ՄԻԻԹԵՆԼՎԿԻՅԷ

Րուսիատա Տօն. Գուպան, Չէր-
նիկով վէ Մինսքի վիլայէթլէրին-
տէ քօլէրա պաշ կէօթէրմիշ տիր:

Րուս Այան մէծ խիստ Եաթտ
չօրայի տէվլէթի՝ Տուլմանըն գա-
պուլ իթտիկի գանուընամէյի գա.
պուլ իթտի Անընլէ միւլանտիա-
նըն ալթօնօմիաթը լաղվ օլմուշ
օլիյօր, Ուքաղլար, ահտնամէլէր
վէ ալէնէն վատլար խիլաֆընա
օլարագ՝ Մ. Սթօլիքինին պու
թէրթիպքէրտէսի ումուսըն նէ-
ֆրէթինէ մուհիպ օլմուշ տըր:

Րուսիան գըրալիցասըն էլի-
զալէթա վէ նամը միւսթաարը
իլէ Գալմէն Սիլվանըն աղըր սու-
րէթտէ խասթա պուլընտըղը Պու-
գրէշտէն Պիլիկիւր թալիպլարա
պիլտիրիլմիշ տիր:

Մըըըր վիւքէլալէյիսի Պուլթ-
րոս բաշա Կալիսին (Սըպտի իւլ-
րիսթիան) գաթիլի օլան էլ վար-
տանի յունիս 15 տէ Գահրէտէ
ասըլտը:

Իրիէտա րուսիան վարօրը
իւզէրինէ հիւճիւմ իթմիշ օլան-
լար թահթը մուհաքէմէյէ ալըն:

Չար մէրտինանտ վէ Չարի-
ցա հագարաթը Բարիստէն Պուք-
սէլէ ալիմաթ իթմիշլէր տիր:

Րուս Խարիճիէ նէգարէթի-
նին օրկանը առտ օլունան նօլօհ
վալիսի կաղէթասը Կիրիտ առտ-
սընը համի տէվլէթլէրին հիւս-
յէսի ալթընտա միւսթագիլ պիր
հիւքիւմէթ հալիլնէ թահիլ իթ-
մէք էն միւնասիպ թէտպիր առտ
իտէյօր:
տըլար:

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՋԱԽԻՐԷ

ՊՈՒՏԱՑ		
Վալսոն 100 քիւ.	48.	
Արապա 45-80 լիպ.	43.40	
ԱՐԲԱ		
Վալսոն 100 քիւ.	40.90	
Արապա 45-52 լիպ.	6.60	
ԵՈՒԼԱՅ 100 քիւ.	40.	
ՋԱՎՏԱՐ 100	44.50/42.	
Արապա	40.35	
ՖԱՍՈՒԼԻԱ 100 քիւ.	23.	
ՏԱՐԸ	46.50	
ԳՕԼՕՁ արապա 55-60 լիպ.	40.4	
Միւսիւր 100 քիւ.	40.5/44.45	
Արապա 75	8.	

ՊԱՆԱԼԻԷ

Վալսոն քիւսապընտա պագգալիյէ մալ- լէրին պու կանքի ֆիլաթը. ալթը ֆը- րանք իլէ:		
ԳԱՀԷ	2. 45/2. 30	
Շէքէր Էնմէք քէլլէ	1.	
Շէքէր քէլլէ, սանտըք—51		
Բիրիլն ձէնօլա չուվալը	47.	
» Ինկիլիզ »	31.	
» Րիզոն »	53.	
» Ֆիլիպ »	47.5.	
ԿԱՁ Պաթուս Սանտըղը	9.30	
» Թրայան »	8.80	
Ջէթիլն Եաղը քիւ.	4.50—4.70	
Գիլիլիլ իւլիւմ	60./70.	
Եումուսթա	4.70	

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

«Իրաւունք» ի խմբագրա-
տունէն կարելի է ստանալ
Հետեւեալ գիրքերը:
ՀԱՐԻՊ ԱԼԳԷՐ ԳԻՆ 1. ֆր
ԱԶԱՏ ԵՐԳԱՐԱՆ » 1. »
ԹԻԱՊԱՐՏ Ա. հատոր » 1.50 »
ԹԻԱՊԱՐՏ Բ. » 2.50 »
ԿԱՐՄԻՐ ԵԱՄՈՒՅ » 1.10 »
ԻՐԱԽՈՒՆԻՐԻ հաւաքածոյ մէկ
տարուանը 12 ֆր.

Издатель: X Курбетянц

Տպարան «Իրաւունք» Վալսոն

ՏՊԱՐ. «ԻՐԱՒՈՒՆԵՔ»

ԿԷ ՏՊԱՐՈՒՆԻՆ ՄԱՐՈՒՐ ԵՒ ՋԱՊԱՐՈՐ ԳԻՆԵՐՈՎ
ԱՄԵՆ ՏԵՍԱՆ ԳՈՐԾԵՐ

Հարսանեկան հրաւիրագիր, Այցատու, Նամակագրութիւն, պահաւան
պարսամուրհակ, Հաւուսթուրքիւր և ուրիշ գործեր

Հայերէն Պոչկալերէն և Յրանալերէն

Մեզ դիմողներու ճաշակին գոհացում տալու համար Տպարանս իր
տրամադրութեան տակ ունի ամէնալիւրջին սիստէմի
գործիքներ և տառեր

ԾԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԸՆԴՈՒՆՈՒՆ ԿԱՆՈՒՎՃԱՐՈՎ ՄԷ